

արքեպիսկոպոսին նախագահութեան տակ ղեկավարութիւն մը կազմակերպելով՝ թաղուհիին կողմէ՝ ղեմումներ ըրին Հռոմ, Գենուա, Վենետիկ, Նէապոլիս, Աւինյոն եւ ուրիշ տեղեր։ Վենետիկի դուքան 11 հոկտ. 1369 թուակիր պատգամնագրովը Մարիամի ղեկավարներուն կը խոստանար իր աջակցութիւնը, յայտնելով նաեւ թէ Հայկական Խնդիրը պիտի մօցնէ իր եւ Գենուայի դքսին ու Եգիպտոսի (1) սուլտանին միջեւ կնքուելիք դաշնագրութեան մէջ։ Ահաւասիկ այն թուղթը։

Պատասխան Վենետիկի դփսին առ դեսպանն Հայոց (2)

Ի վաղուց հեռէ եւ յընթացս ժամանակաց յատուկ խնամք ունեցանք իւր (այսինքն՝ Հայոց) թագաւորութեան պահպանութեան. ուստի նեղութեանց եւ վտանգներու համար, որոց ենթարկուած է այդ թագաւորութիւնը Սարակինոսաց հալածանքներու եւ պատերազմներու պատճառաւ, մեծապէս կը ցաւինք. եւ այն բաներու մէջ յորս կրնանք՝ միշտ պատրաստ եղանք եւ ենք մեր օգնութիւնը մատուցանելու։

Ուրախ ենք, ինչպէս գիտեն, զաշնագրութեան համար զոր ըրինք մեր շքեղաշուք եղբոր Դուքսին եւ Եանուայի Հասարակութեան հետ (3). եւ այդ միութեան մէջ երկու կողմն ալ համաձայնեցան որ բաւական թուով լաւ հանգերձաւորուած նաւեր ղրկեն երբ սուլտանն Բարեղոնի չուզէ իրազաղութիւն կամ ինչ որ Դաշնակցաց պատուոյն կը վերաբերի, զործեն ի վնաս սուլտանին ինքնին՝ եւ անոր օգնողաց։ Յիրաւի այդ միութիւնը, որպէս յայտ է, մեծ եւ նշանաւոր նպաստ մը պիտի ըլլայ թագաւորութեան Հայոց եւ ամենայն քրիստոնէից կողմանցն արեւելից։ Դարձեալ, գիտնալով որ վերոյիշեալ մեր շքեղաշուք եղբոր Դուքսին եւ Եանուայի Հասարակութեան տրամադրութիւնն եւ կամքը մերինին հետ զէպ ի մէկ վախճան մը կը զուգընթա-

(1) Ըստ բնագրին՝ «Բաբելոնի», վասն զի հին Կահիրէն ա՛յսպէս կը կոչուէր։ Այս մասին խօսելու առիքը պիտի ունենամ աւելի հետուն։

(2) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document II.

(3) Եանուա՛ է ձեւովա (Genova)։ Միջին դարու մէջ այսպէս կը կոչէին, համարելով որ Janusէն հիմնուած ըլլայ։ Իսկ Դուքսը՝ այդ Հասարակապետութեան (Communis) գլուխն է։

(Ծնք. Թրգմ.)